ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«04» սեպտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2008 թ. սկսած ՀՀ կառավարության որոշմամբ սեպտեմբերի 4-ը Հայաստանում նշվում է որպես Փրկարարի օր:

Հայ փրկարարները հսկայական դեր են ունեցել տարբեր ժամանակներում հայ ժողովրդի առաջ ծառացած բարդ ու դժվարին իրավիճակներում:

Ողորտի նվիրյալների անձնուրաց ու սրտացավ աշխատանքի շնորհիվ է, որ հաղթահարվում են տարերային աղետներն ու արտակարգ իրավիճակները, փրկվում մարդկային կյանքեր:

Ողորտի հարգարժան աշխատակիցներ, ՆԳՆ Ստեփանավանի հրշեջ փրկարար ջոկատի, Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

Ձեր հերոսական, անձնվեր և պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ այսօր ունենք բնակչության վստահությունը, սերն ու հարգանքը վայելող կառույցներ:

Վստահ եմ, որ այսուհետ ևս մասնագիտական նույն բարձր պատրաստվածությամբ, մարդկային որակներով և արժանապատվությամբ կշարունակեք իրականացնել մեր բնակչության ու տարածքների պաշտպանության ձեր առաքելությունը:

Մաղթում եմ անփորձանք ծառայություն, ձեր ընտանիքներին՝ բարօրություն և երջանկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ